



JOHN OR JANE SAMPLE  
1234 SAMPLE STREET  
ANYTOWN CA 90000

## «Medi-Cal» -ի Ձեր նպաստները փոխվում են

Հարգելի [Member Name]

Այս նամակը վերաբերում է Ձեր առողջապահական նպաստներին: Ձեր առողջության ապահովագրության մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Այժմ Դուք բուժսպասարկում եք ստանալու «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի միջոցով:

Հունվարի սկզբին մենք Ձեզ «My Medi-Cal Choice» փաթեթ ենք ուղարկել: Փաթեթում բացատրվում է, թե ինչպես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրել: Եթե մինչև **2020 թ. մարտի 1-ը** Դուք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր չընտրեք, մենք Ձեզ կընդգրկենք հետևյալ ծրագրերում:

Անվանումը`	Առողջապահական ծրագիրը`	Ատամնաբուժական ծրագիրը`	Սկսվելու ամսաթիվը`
<Insert Bene's Name>	<Insert MCP>	Medi-Cal Dental	3/1/2020

### Ի՞նչն է փոխվում

Ձեր առողջության ապահովագրությունը փոխվել է **լիարժեք** «Medi-Cal»-ի ծառայությունների: Այժմ Դուք ավելի շատ նպաստներ կստանաք: Դուք բուժսպասարկում եք ստանալու «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի միջոցով:

Լիարժեք «Medi-Cal»-ով Դուք կարող եք մինչև երկու ամիս շարունակել ծառայություններ ստանալ «Medi-Cal Fee-For-Service» (սովորական «Medi-Cal») ընդունող ցանկացած բժշկից: «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկվելուց հետո Դուք բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները կստանաք առողջապահական ծրագրի միջոցով:

## Ի՞նչ է «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը Ձեզ բժշկական առումով անհրաժեշտ ծառայություններ է տրամադրում բժիշկների «ցանցի» (խմբի) միջոցով: Նրանք նախնական և կանխարգելիչ բուժապասարկում են տրամադրում: Երբ Դուք ընդգրկվեք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում, այն՝

- կօզնի Ձեզ համակարգել Ձեր բուժապասարկումը
- կօզնի Ձեզ բժիշկներ և մասնագետներ գտնել
- բուժքույրական խորհրդատվության 24-ժամյա հեռախոսագիծ կտրամադրի
- անդամների սպասարկման բաժնի օգնությամբ Ձեզ օգնություն կտրամադրի
- փոխադրամիջոցով կօզնի Ձեզ բժշկի այցելությունների համար
- կօզնի Ձեզ ստանալ Ձեզ անհրաժեշտ այնպիսի ծառայություններ, որոնք չեն մտնում ծրագրի ապահովագրական ծածկույթի մեջ

## Ի՞նչ կկատարվի դրանից հետո

Դուք պետք է որ փոստով ստացած լինեք Ձեր «My Medi-Cal Choice» փաթեթը: Դրանում բացատրվում է, թե ինչպես առողջապահական ծրագիր և բժիշկ ընտրել: Հեռախոսով որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելու համար զանգահարեք «Health Care Options» (HCO)՝ **1-800-840-5032** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով:

## Ես ի՞նչ ընտրություն ունեմ

1. Դուք կարող եք ոչինչ չանել: **2020 թ. մարտի 1-ին** մենք Ձեզ կընդգրկենք «Medi-Cal»-ի վերը նշված առողջապահական ծրագրում:
2. Դուք կարող եք **մինչև 2020 թ. մարտի 1-ը** անդամագրվել «Medi-Cal»-ի վերը նշված առողջապահական ծրագրին և բժիշկ կամ կլինիկա ընտրել:
3. Դուք կարող եք անդամագրվել «Medi-Cal»-ի **մեկ այլ** առողջապահական ծրագրի և այդ ծրագրի որևէ բժիշկ կամ կլինիկա ընտրել:

Եթե այժմ Դուք ցանկանում եք անդամագրվել վերը նշված ծրագրին կամ որևէ այլ ծրագրի, զանգահարեք HCO՝ **1-800-840-5032** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ փոստով ուղարկեք Ձեր փաթեթում գտնվող ընտրության թերթիկը: Եթե մինչև 2020 թ. մարտի մեկը Դուք անդամագրվեք որևէ առողջապահական ծրագրի, ապա Ձեր առողջապահական ծրագիրը կարող է սկսվել արդեն **2020 թ. փետրվարի 1-ից**:

## Ինչպե՞ս եմ ես ատամնաբուժական ծառայություններ ստանալու

**Ատամնաբուժական** ծառայությունները Դուք ստանալու եք «Medi-Cal»-ի Ատամնաբուժական ծրագրի միջոցով: Դուք կարող եք ատամնաբուժական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարդալ այս նամակի հետ ուղարկված «Հաճախակի տրվող հարցեր» (FAQ) էջում: Դուք պետք է այցելեք «Medi-Cal»-ի Ատամնաբուժական ծրագիրն ընդունող ատամնաբույժի: Ձեր մոտակայքում ատամնաբույժ գտնելու համար զանգահարեք «Medi-Cal»-ի Ատամնաբուժական ծրագրի Հաճախորդների սպասարկման բաժին՝ **1-800-322-6384** (TTY՝ 1-800-735-2922) հեռախոսահամարով:

Այս նամակի հետ ուղարկված «Հաճախակի տրվող հարցեր» (FAQ) էջում նկարագրվում են նաև «Medi-Cal»-ի միջոցով տրամադրվող այլ ծառայությունները: Դրանց թվում են հոգեկան առողջության ծառայությունները, ոգելից խմիչքների և թմրադեղերի կախվածությունից բուժման ծառայությունները, ակնաբուժական ծառայությունները և բժշկական առումով անհրաժեշտ այլ ծառայություններ:

## **Այժմ ես ինչ պետք է անեմ**

- Խոսեք Ձեր բժշկի կամ կլինիկայի հետ և պարզեք, թե արդյոք վերջինս աշխատում է «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի հետ:
- Մեկ ընտրություն կատարեք վերը՝ այս նամակում թվարկված «**Ես ինչ ընտրություններ ունեմ**» բաժնից:
- Լրացուցիչ ծրագրերի համար զանգահարեք HCO՝ **1-800-840-5032** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ սպասեք, մինչև փոստով կստանաք «*My Medi-Cal Choice*» փաթեթը: Փաթեթը դրված կլինի «Department of Health Care Services»-ի կողմից ուղարկված մի մեծ ծրարում:
- Կարող եք նաև այցելել մեր կայքը՝ **[www.healthcareoptions.dhcs.ca.gov](http://www.healthcareoptions.dhcs.ca.gov)** հասցեով:

Եթե Ձեզ լրացուցիչ օգնություն է հարկավոր, զանգահարեք «Department of Health Care Services Ombudsman»-ի Օմբուդսմանին՝ 1-888-452-8609 հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը: Զանգն անվճար է:

## **Ո՞ւմ դիմել լրացուցիչ հարցերի դեպքում**

### **Ոգելից խմիչքների և թմրադեղերի օգտագործման հետ կապված խնդիրների համար տրամադրվող ծառայությունները**

Շտապ խորհրդատվության, թունազերծման ծառայությունների, ինչպես նաև ստացիոնար վերականգնողական կամ երկարատև խնամքի երթևեկ կենտրոններում բուժում ստանալու հարցում օգնության համար դիմեք Ձեր տեղական ծրագրին՝ այցելելով Ոգելից խմիչքների և թմրադեղերի ծրագրի շրջանային տեղեկատուի (Alcohol and Other Drugs Program County Directory) կայքը՝ **[www.dhcs.ca.gov/individuals/Pages/SUD\\_County\\_Access\\_Lines.aspx](http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/SUD_County_Access_Lines.aspx)** հասցեով:

### **Հոգեկան առողջության ծառայությունները**

Ոչ ճգնաժամային հարցերի, ընդհանուր ծառայությունների և տեղեկությունների համար դիմեք Ձեր տեղական հոգեկան առողջության դեպարտամենտ, որը նշված է Հոգեկան առողջության շրջանային ծրագրի կոնտակտների ցուցակի (County Mental Health Plan Contact List) կայքում՝

**[www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx](http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx)** հասցեով:

«Medi-Cal»-ի վերը նշված ծրագրին անդամագրվելուց հետո, հոգեկան առողջության հետ կապված ծառայությունների հարցում օգնություն ստանալու համար Դուք կարող եք զանգահարել նաև Ձեր ծրագրի անդամների սպասարկման բաժին:

## **Health Care Options**

Եթե հարցեր ունեք «Medi-Cal»-ի Ձեր նպաստների մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին, օգնության կարիք ունեք հեռախոսով անդամագրվելու կամ ատամնաբուժական ծրագիր ընտրելու հարցում, կամ եթե ցանկանում եք այս նամակը մեկ այլ լեզվով, խոշորատառ տպագրությամբ, ձայնագրված կամ Բրայլի գրատիպով ստանալ՝

Զանգահարեք՝ **1-800-840-5032** (TTY՝ 1-800-430-7077), երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը կամ այցելեք՝

**[www.healthcareoptions.dhcs.ca.gov](http://www.healthcareoptions.dhcs.ca.gov)**

## **«Medi-Cal»-ի Ատամնաբուժական ծրագրի Հաճախորդների սպասարկման բաժինը**

Sacramento-ից բացի մնացած բոլոր շրջաններում «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայություններ տրամադրող գտնելու, կլինիկական ստուգումների ժամադրություն ստանալու մասին տեղեկությունների համար կամ «Medi-Cal»-ի Ատամնաբուժական ծրագրի հետ կապված ընդհանուր բնույթի հարցերի դեպքում՝

Զանգահարեք **1-800-322-6384** (TTY՝ 1-800-735-2922), երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը կամ այցելեք՝

**[www.denti-cal.ca.gov/Beneficiaries/Denti-Cal](http://www.denti-cal.ca.gov/Beneficiaries/Denti-Cal)**: